ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«06» փետրվարի 2020 թվականի N: 45-Ա ք.Գյումրի

«ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի ԹԻՎ 104-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերի, 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «է» ենթակետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1689-Ա որոշման 1-ին կետի դրույթները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 25-ին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 25092019-08-0036 վկայականը, «Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2019 թվականի նոյեմբերի 18-ին տրված անշարժ գույքի գնահատման թիվ 11181911 հաշվետվությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության 250000000 (երկու հարյուր հիսուն միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ կանոնադրական կապիտալը (տաս սովորական անվանական բաժնետոմս) լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի Գ. Նժդեհի փողոց 3/6 հասցեում գտնվող 0,21124 հա հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 08-001-1223-0040) շուկայական արժեքի՝ 38922000 (երեսունութ միլիոն ինն հարյուր քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 288922000 (երկու հարյուր ութսունութ միլիոն ինն հարյուր քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 20 (քսան) հատ՝ 14446100 (տասնչորս միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով (սովորական) անվանական բաժնետոմս:

3. Այդ կապակցությամբ հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի մայիսի 4-ի թիվ 104-Ա որոշմամբ հաստատված «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 19-րդ կետի փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնարարել «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման համար:

5. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6 – Ի N 45-Ա ՈՐՈՇՄԱՆ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ա Ն

(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)

Կանոնադրության 19-րդ կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

19. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 288922000 (երկու հարյուր ութսունութ միլիոն ինն հարյուր քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 20 (քսան) հատ՝ 14 446 100 (տասնչորս միլիոն չորս հարյուր քառասունվեց հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով (սովորական) անվանական բաժնետոմս:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 20 (քսան) բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են: